2024թ. հուլիսի22-ի տեղեկագիր

ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ VS ԴԱՍԱԿԱՆ

Սույն թվականի հուլիսի 22-26-ը «ՏՈՒԿ ՖԱԱՌԱԼՊ» հիմնադրամում կազմակերպվեց Robot-oo «Արդյունաբերական համակարգերի ավտոմատացման բազային գիտելիքներ» թեմայով հինգօրյա ինտենսիվ դասընթաց՝ ՀՀ տարբեր քոլեջների դասախոսների և «Moonq» տեխնոդպրոցի ներկայացուցիչների համար:

Այս անգամ կրթական մոդուլը նախատեսված էր Գավառի, Վարդենիսի և Տավուշի պետական քոլեջների մանկավարժական անձնակազմի անդամների համար:



Ռոբոտաշինության դասընթացը պարզապես ծանոթություն չէ ոլորտի նոր տեխնոլոգիաներին: Մասնակիցները գործնական աշխատանքների միջոցով սովորում են վիզուալ ծրագրավորում, զարգացնում են ստեղծագործական և վերլուծական մտածողություն, ձեռք են բերում թիմային աշխատանքի միջոցով խնդիրների լուծման հմտություններ:

Ուսուցողական ստենդների կարևորությունը տեսական և գործնական աշխատանքների համար չափազանց բարձր է:

Դասընթացի ընթացքում մասնակիցներին են փոխանցվել բազային գիտելիքներ ռոբոտաշինության և կառավարման ավտոմատացված համակարգերի ծրագրավորման ոլորտներում: Շեշտը դրվել է տեսական գիտելիքները գործնականում կիրառելու վրա:

Մասնակիցները հույս ունեն, որ մասնագիտական զարգացմանն ուղղված միջացառումները պետք է լինեն շարունակական: Նրանք պատրաստակամություն են հայտնել իրենց ստացած գիտելիքներն ու կարողությունները փոխանցել իրենց աշակերտներին:

Համաձայն արդեն իսկ ձևավորված ավանդույթի՝ դասընթացի վերջում նրանց հանձվեց վկայականներ մոդուլին մասնակցելու համար:

,